

U. •

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻՍՏԻՑ

Կ. Պօլիս, 19 ապրիլի

Վերադառնալու ժամանակս սրբազան ընդունեց Ազգեանի փոխանորդութիւնը և վաղը, ամսոյս 20-ին, պիտի մեկնի Եմբիսին՝ կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու: Ազգեանի և Օրմանեանի միջև անցած միջնադէպը այս առթիւ բաժանեալ հետաքրքիր և բաւական պիտի պարզաբանէ Օրմանեան սրբազանի փոխանորդական պաշտօնը, նորա բռնած դիրքը կաթողիկոսական ընտրութեան ժամանակ և նորա ընտրելին: Անս միջնադէպը:

Ազգեանին և Ազգեանը կաթողիկոսացեալ ցանկացողներու խմբակին հարկաւոր էր Կ. Պօլէն պատրիարքի փոխանորդութեան պաշտօնով այնպիսի ազդեցիկ, զարգացած, համոզիչ լեզու ունեցող և մեծ համարում վայելող հոգևորական մը գտնել, որ իրեն առաջնութիւնը յաջողութեամբ կատարէ: Դո՛ւք անհրաժեշտ էր այդպիսի մէկը ունենալ, Ազգեանի կաթողիկոսացումը անպատճառ աջողակեալու համար: Վիսակն ելաւ Օրմանեան սրբազանին: Սրբազանը նախապէս գիտակցելով փոխանորդի դերի և պարտաւորութեանց, հրաժարելով հրաժարեցաւ իրեն առաջնութեան փոխանորդութենէն, չը խաբարէր մինչև իսկ Նուրիանի ճարտար լեզուէն, երբ խոջի խայթէն զրդեալ: Այդ ալ կը սպասէր Օրմանեանին: Նուրեան և իւր խմբակը, հանդերձ Ազգեանին վայրկեան մը չփոխեցան, բայց խնդրեցին չը կորուսին:

Բազմաթիւ խոստովանելով չը կրնայի կոտրել Օրմանեանի հօր կեղծը, որոշեցին մի մեծ շքանշանով իրենց նպատակին հասնել և պատրիարքայական առաջարկել Բ. Կրանը ինչ ինչ բարձր պետական և ազգային ծառայութեանց համար վարձատրել Օրմանեան եպիսկոպոսը Օրմանիէի երրորդ աստիճանի շքանշանով և մի շարքովայ մէջ յաջողակցին Նուրեան և Արիկ Էֆէնդիները Բ. Կրանին ստանալ շքանշանի հրամանը և կրկնաւորութիւնը: Բայց այս անգամ մեծ եղաւ իրենց չիփոխումը և դարձումը, երբ տեսան սրանով ալ չը կրցան կապանք և վարձել անկաշառելին: Այս անգամ քիչ մնաց խնդրեցին կորսնցնել մեր անկախ ազգայնականներն ու մեծ զիջումներով դիմել կարծողները: Բայց դարձաւ չը վճարեցան, սկսան ամեն ունեակ լեզու թափել և վերջապէս յաջողեցան կոտրել Օրմանեան սրբազանը և խօսք առնել, որ իւր բարձր հեղինակութիւնն ու ազդեցիկութիւնը դրո՛ւք քննէ Ազգեանը կաթողիկոսացնելու:

Մենք ճանաչելով Օրմանեան սրբազանը և գիտնալով ամեն անցած դարձածները, նորէն չենք տարակուսել, որ նորին սրբազանութիւնը ջանք ու ջիւղ չի բերել այլոց համոզելու, որ իրենց ջոճէնէն բո՛ւն ալ այդ անձին:

Յ.

ՆԱՄԱԿ ԱՆՍՏՐԱՅԻՑ

Վիեննա, ապրիլի 12/24-ին

Այսօր պատմական յիշատակարաններով ոչ այնքան հարուստ Վիեննայում կատարվեց զինուորական մեծ շքով և փառանքներով մի զորավարի արձանի բացման հանդէսը: Այս գործողութիւնը դիպելով է Աւստրիայի ամենաբարձրագոյն, մասնական և կենսական խնդիր կազմող հարցին, այն է ազգայնական հարցին, ուստի կարծում ենք այս դէպքն արժէ յիշատակել իբրեւ ընդհանուր հետաքրքրական մի երևոյթ:

Այս զորավարը, որի անունը հաւանօրէն այլուր սակաւակ է անձանց պիտի յայտնի լինի, այստեղ շնորհի հարկաւոր լրագրողին ամիսներով ի վեր յիշատակութեան, խիստ ժողովրդական (populär) և ամբողջ նրան, ինչպէս էլ նորին թերթերն են հաւատացնում, սովորաբար «Վատեր-Րադեցկի» (Vater-Radetzky) է անուանել. սակայն եթէ նա արժանացել է այդ անունին, անկասկած չորհիւ իր խորը ծերութեան, նա վախճանվել է 92 տարեկան հասակում: Նրա մասին պատմութիւնից մեր քաղաք տեղեկութիւնները հետեւեալներն են:

Յարմար չէի, կոմ Բադեցկի ծնվել է 1766 թին Մարիա Թերեզա կայսրուհու օրով և ճնշեմանով հասակել իրան զինուորական ծառայութեան նուրբով: Ծառայել է, նման Եւգէն Սալայային, երբ կայսրին Յոսէֆ երկրորդին, Լեօպոլդ երկրորդին և Ֆրանց երկրորդին: Նա իր եր-

կարաւ և կենսում մասնակցել է 17 արշավանքներին, յաճախ առիթ է ունեցել անձամբ զգալու աւստրիականներին Նապոլէոնի ձեռքով հաղթած հարուածները: Լայպցիգի ճակատամարտում, նա իբրեւ աւստրիական զինուորական շտաբի անդամ կազմել է պատերազմի ծրագիրը և վերջապէս բռնակրի և պարտապիտանի զորքերի հետ երկու անգամ Պարիզ մտնելով ակնառու է եղել Նապոլէոնի իշխանութեան կործանման և Բուրբոնների հայրենիք վերադառնալուն: 1816—1831 թիւը նա անդամ է մնում և սպա այդ թիւականից ստանում է Խոսիայի աստրիական զորքերի հրամանատարութիւնը և 1848—1849 թիւականին, երբ խաղաղքը նոր ողի առնելով ձգտում են օտար բռնակրի լուծը թօթափել, ազգային ազատութիւնը ձեռք բերել, կոմ Բադեցկին աջողութեամբ է, թէ է ոչ առանց պարտութիւնների, այդ ազգային շարժումը ճնշել՝ դեռ ոչ բոլորովին կազմակերպված իտալացիների վրա մի քանի յաղթութիւններ տանելով: Այս ինչն ըստ ինքեան չնային և անհայտ յաղթութիւնները բաւական էին Աւստրիայում, ուր բացի Ֆրանսիայի Եւգէն Սալայայից և Դանուբի ոչ մի յայտնի առաջնակարգ զորավարի չկար հանդիպում, նրան ի շարս ազգային հերոսների դասերու:

Արձանի բացումից դեռ մի քանի օր առաջ նուրբ կատել էր դէպի նրա կանգնած տեղը հետաքրքրելուների արտասովոր շարժում. ոմանք քննել էին հանդիսի նախապատրաստութիւնները տեսնելու, միւսներն իրանց թանգ քննել (10—5 դուրդէն մի տեղը, ուր ամաց փողով 4 ր. 50 կ.) ձեռք բերած տեղերի յարմարութիւնը դիտելու, և այլն, և այդ բարձրութեան ներկայութիւնից օգտվելով ամեն մի քայլափոխում հարկաւոր կին և մարդ ծախողներ առաջարկում էին անցնողներին իբրեւ յիշատակ քննել Բադեցկի—յուշադրում, Բադեցկի ծրագիրը և այլն և այլն: Նման ուրիշն արձանը վարձատրելով ծածկելով այդպէս տեղացեալ, քանի որ Մերկուրի ժրջան ծառաները նրա ամեն մի գաղտնիքը նախօրոք պիտի հասարակութեան յայտնէին մի քանի կրէյցերներ ստանալու համար:

Ժամի 8-ին ոտով կանգնելով դէպի արձանի հրապարակ տանող բոլոր անցքերը փակել էին, առանց տոմսակի ոչ ոքի ներս չէին թողնում: Այսօր այստեղ կարելի եղաւ միայն համակարգված տեսնել աւստրիական ամբողջ զօրքի ծաղիկը, որովհետեւ հանդիսին մասնակցեցին ոչ միայն ամբողջ զօրածն (activ) բանակի զանազան գնդերի առանձին առանձին խմբեր, այլ և ներկայ էին բոլորովին զաւաճաւ, վաղուց զինուորական կուսման valet ասած ծեր վետերաններից սկսած մինչև վերջին տարում ծառայութիւնից արձակված զինուորիկները: Այս վերջինները, Բադեցկի անուն կրող գնդերի անդամները, կամ նրա ձեռքի տակ ծառայողներն էին, որոնք թիւով տասն հինգ հազար, հանդիսի առիթով քաղաք էին կանգնած:

Ժամի 9-ից սկսվեց այդ խմբերի շարժումը դէպի արձանի հրապարակը. նրանց անցած փողոցի երկու կողմերին լուծված էր ամբողջ. նա հրապարակեամբ դիտում էր իր զաւակներին, իր երկրի յայտն. վայ մի զինուորին, եթէ սխալ քայլ արաւ, հազարաւոր աչքեր անկապելով դիտում էին նրա շարժումը: Ամենամեծ գովասանքի արժանացան բարձրահասակ, առողջադէմ, կարմրափն բռնակցի, և քալ իրենական տիւրօցիք. արանց աւելեց քայլերը մի 17—18 տարեկան բուռնեցի գեղեցկուհի. նա ինձ յիշեցրեց տեղափոխութիւն և կիսբնեւին, երբ գերմանուհի պատերազմում միշտ ընկերակցելով իրանց ամուսնիներին և եղբայրներին, վերադառնալով դարձանում, լրջեալներին ուղեւորում էին:

Ժամի 12-ին եկաւ ինչն կայսրն բաց կառքում նստած, չըբազատված բազմաթիւ պալատականներով և զաւաճեալից եկած բարձրաստիճան հիւրերով, որոնց մէջ աչքի էին ընկնում մանաւանդ մադար և լեհացի մագնատները իրանց ազգային փառահաղ համարողներով: Կարծ ժամանակից յետոյ սկսեցին ուրտալ թնդանօթները և վարադուրն ընկնելով ժողովրդի աչքին ներկայացաւ աւստրիական զօրավարի բրնձեղայ արձանը. նա ձիու վրա հանգիստ նստած, ձախ ձեռքով ձիու սանձը բռնած՝ աջը դէպի առաջ է մեկնում՝ որպէս թէ իր աղիւտաններին պատուէրներ տալ է ցանկանում:

Նա ազգով ինչպէս յիշեցինք, չէի է: Աւստրիայի մայրաքաղաքը նրան արձան կանգնեցնելով, երբ նա վաղուց արժանացել է այդ պատւին իր հայրենիքի մայրաքաղաքում՝ Պարիզում, գործել է որոշ

նպատակով. նախ՝ նա կամեցաւ, ապազայի սպանակները նախապէս իր վրէժի մէջ անցնել փառաւոր յիշատակը վերականգնել, բայց զիտաւորապէս նա կամեցաւ չնախան անհանգիստ ժողովրդին խաղաղութեան և հաշտութեան օրինակ տալ: Յայտնի է, որ դուք ոչ մի տեղ ալ չի ազդութեան հարցը այնպէս խիստ բոլորված չէ, ինչպէս Աւստրիայում և այդ շտա ինական է: Աւստրիական կայսրութիւնը բազմապէս լինելով այդպէս ազգերի մեծ խմբերի մի կայսրի իշխանութեան ենթարկվող միացումից, իր ներկայ կացութեամբ մի անհնական երևոյթ է ներկայացնում, որովհետեւ այդ իշխանութիւնը հիմնված է ոչ թիւական բազմաթիւ ազգի վրա, այն է՝ սլաւոնների վրա և ոչ էլ հաւասարութեան վրա, որով անհամեմատ բազմաթիւ սլաւոններ նոյն իրաւունքները և արտօնութիւնները պիտի վայելէին, ինչ որ չափազանց գերադասված և փայտիված մադարները և գերմանացիք: Սլաւոնների մէջ ոչ ոք և նշանակութիւն ունեն ամենից՝ առաջ լեհերը և չեխերը, իսկ միւսները՝ սլաւոնները, խորվաթները, սերբերը, բոսնիացիք և այլն թէ թիւով անհայտ են և թէ ցրված լինելով կայսրութեան չմէջ՝ տեղ տեղ կամ՝ գերմանացի էին, կամ մադարացի, միայն վերջերս են սկսել արթննալ և իրանց ազդութեան պահպանման և իրաւունքների մասին մտածել: Լեհերը հետեւում են աւելի հեռատես քաղաքականութեան. նրանք աղմուկ են հանում, պարլամենտի մէջ բազմութիւն կազմելով նրանք խնայել կերպով տեղութեան հետ հայտ են մնում և ի հարկէ աւելի չեն բաց թողնում, երբ կարելի է այս կամ այն արտօնութիւն ստանալ. նրանք գործում են ապագայի համար, ի միջի այլոց սրանց այդ ընթացքը ազդեցութեանն են վերաբարձրում Գերմանիայում լեհացիներին ուսումնարանական հարցում արած դիմումները:

Տէրութեան համար ամենակարգաւոր տարրը կազմում են չեխերը իրանց անգուսպ և շատ անգամ վրաւորել պահանջներով, թէ է անկայսրի է նրանց ցանկութիւնների արդարութիւնը. նրանք չեն ուղեւոր աւելի սակաւաթիւ գերմանացիներին ենթարկվել, չեն կարող հայտ աչքով նայել թէ ինչպէս մադարները իրանց սեփական փողով, զօրքով, պարլամենտով և այլն միանգամայն անկախ տէրութիւն են կազմում, և ձգտում են ոչ միայն իրանք իբրեւ ազդութիւն, կայսրութեան միջոցները գործ ածելով, ամբապնդանալ, այլ և միջոցներ են ձեռք առնում իրանց երկրում ապրող փոքր սլաւ, գերմանացի, հայ և այլն ցեղերը կանաւ. նրանք, ինչպէս ասեցինք, բուռն կերպով պահանջում են իրաւունքների և պարտաւորութիւնների հաւասարութիւն:

Բադեցկին տուած պատիւներով նախատեսված է եղել անկասկած ի միջի այլոց չեխերի ազգային փառաւորութիւնը շուրջ, նրանց աւելի սերտ կերպով կապել կայսրութեան մայրաքաղաքի հետ, նրանց համոզել, որ տէրութեան իւրաքանչիւր հպատակ համաձայն իր գործերի կը վարձատրվի ըստ արժանւոյն, թէկուզ նա չէի լինի:

Արդեօք այս դասից կը խնդրեան չեխերը, կը թողնեն իրանց բռնած ընթացքը. շատ կասկածելի է:

Փ. Տ. Մ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Խաղաղական Ումբերտո թագաւորը Բերլինից վերադառնալու ժամանակ կայցելի Սաբոսիայի թագաւորին:

—Ճարմարական հանրապետութեան նախագահ Կարնո, լրագրողների ասելով, նոյնպէս մի քանի սպանական նամակներ է ստացել. այդ սպանական ուղիով լիլիանս պալատի մուտքերի մօտ հսկում են պոլիցիական 12 պաշտօնականներ:

—Հռոմից, ապրիլի 19-ին (մայիսի 1) հեռագրում են հետեւեալ. «Մայիսի 1-ի նախընթաց օրը իտալական անարմիտները ամենակարգաւորները մասամբ կարանաւորվեցան արտասահմանում տեղական ոստիկանութեան ձեռքով, մասամբ էլ բանտարկվեցան խաղաղաւոր, որպէս կիլիբարի և նրա նմանները: Երկու օր է արդեն, որ խաղաղութիւններ են կատարվում ամեն տեղ, մինչև անգամ գորանոցներում: Ներկայումս ամբողջ իտալիայում մօտ 900 հոգի են կարանաւորված, որոնցից 90 հոգի զինուորականներ են»:

—«Figaro» լրագրի Բերլինից հեռագրում են ապրիլի 18-ից (30-ին) հետեւեալը. «Այսօր առա-

ւօտ Բերլինի տների պատերի վրա կայցրած էր սօցիալիստական մանիֆէստ՝ զարդարված մի նկարով, որը պատկերացնում է հանրապետութիւնը կնոջ տեսքով: Ոստիկանութիւնը յարձուժիս գրաւեց «Սօցիալիստ» լրագրի համարը, որը տպված էր կարմիր թղթի վրա և պարտաւորվում էր առաջին երկուսի վրա «հանդերձիկ Մարտիկէզ» վերնագրով յետափոխական երգը: Չը նայելով լրագրի այդ համարի խախտմանը, այդ լրագրի համարները մեծ քանակութեամբ տարածվեցան»:

—«Times» լրագրի Բերլինի թղթակցը իտալական Ումբերտո թագաւորի Բերլին գնալու մասնաւոր անուրիւթիւններն է հաղորդում: Վերոյիշեալ լրագրի թղթակցի խօսքերով, Ումբերտո թագաւորը կը յայտնէ Բերլինում, որ ինչն այլ ևս չէ կարող զինուորական բիւրօյի ծանր լուծը կրել: Թղթաւիցն աւելացնում է, որ Աւստրիան ևս պատրաստվում է նորն պահանջներն անել:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԻՆ ԳՐԻՄԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ՊԱՐԻՋ, 27 ապրիլի: Այսօր այստեղի բօրայում սկսվեցան ուսուցիչ թղթաւորումի օպերացիաներ: ՎԻԵՆՆԱ, 27 ապրիլի: Վերոյիշեալ մօտ, Ումբերտո թագաւորը, զինուորով քանդված է այն տան մի մասը, որը պատկանում է նահանգական հոտար Պապպիին, որը չէ վայելում ժողովրդի համակրութիւնը: Մարտիկ չեն վնասված: Պայթիւնի առաջ բերող ձեռքաւորված է: Վերոյիշեալ նոյնպէս զինամիտային պայթիւն տեղի ունեցաւ, բայց առանց վնասների:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 27 ապրիլի: Կրօնատու երէկ երկը նաւ եկան և բացեցին հաղորդակցութիւն ծովի հետ—«Новости» լրագրի լսել է, որ համաձայնութիւն է կայացել՝ երկաթուղու գիծ անցկացնելու Ստաւրօպոլից մինչև Կովկասեան-Վլադիկավկասեան ճանապարհի կայարանը:

ՕՐԵՍՏԱ, 27 ապրիլի: Այստեղ հասաւ Ֆրանսիական «Պետրո» զինուորական նաւը, որի նաւապետին և օֆիցերներին պատիւներ տուեցին վարչական անձինքը:

Կ. ՊՈԼԻՍ, 28 ապրիլի: Դատարանը վճիռ կայացրեց Վալկովիչի սպանութեան գործի վերաբերմամբ—Մերկուրի խորհուրդը դատաւարութեան է մանկան պատժել, իսկ Տիւֆէլիսի երկու եղբայրները՝ տաժանակիր աշխատանքների 15 տարով:

ԲՐԻՒՍԷԼ, 28 ապրիլի: Մի քանի քաղաքական գործիչներն են դատաստանական պաշտօններին ուղարկված են սպանական նամակներ: Անարխիստներից մինը խոստովանեց, որ ինքը ցանկացել է պայթեցնել Լիւստիլում՝ խորհրդական Ռոմսոնի բնակարանը: Այժմ կատարելապէս որոշված է ձեռքաւորված անարխիստների պատասխանատուութեան չափը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Ապրիլի 28-ին			
Ընդունի վրա 10 ֆունտ արծէ.	95	10	կ.
Բերլինի վրա 100 մարկ	46	55	»
Պարիզի վրա 100 ֆրանկ	37	65	»
Ռուսի	7	58	»
Մադալայի կուպոններ	151	25	»
Արժամ	1	12	»
Բօրային դիվիդենդներ	4	5 1/2	»
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի	102	75	»
— — — — —	102	60	»
— — — — —	2-րդ	—	»
— — — — —	3-րդ	—	»
— — — — —	4-րդ	—	»
— — — — —	5-րդ	—	»
— — — — —	6-րդ	102	25
6% ոսկեայ ընտա	154	—	»
4% ոսկեայ փոխառութիւն	—	—	»
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	—	—	»
— — — — —	2-րդ	102	12
— — — — —	3-րդ	103	—
Ներքին 5% առաջին փոխառութ.	239	—	»
— — — — —	երկրորդ	218	50
Պետ. տական երկրորդային ընտա	104	—	»
5 1/2% ընտա	—	—	»
4% ներքին փոխառութեան	95	—	»
5% դրաւ. թղթի. ազն. կալ. բանկի	101	62	»
Ազն. կալ. բանկի խաղաղութեան գրաւ. թղթ.	197	25	»
5 1/2% վկայակ. գրաւ. հող. բանկի	104	87	»
4 1/2% դրաւական թղթեր կալուած.	—	—	»
փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	146	—	»
— — — — —	101	50	»
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օրկիցայինները	101	25	»
Մոսկովի քաղաք. օրկիցայիններ	101	12	»
Օրէնսայի	101	50	»
Թիֆլիսի	—	—	»
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի	99	25	»
— — — — —	99	50	»
Ս. Պետերբուրգի բօրային տրամադրութիւնը հանրային է:	—	—	»

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆԻՆԻ

